600.0293.07.08.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

7 օգոստոսի 2019 թվականի №293Ա
ք.Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի ապրիլի 12-ի №89Ա որոշմամբ համաձայնություն է տրվել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող Երևան քաղաքի Արցախի փողոցի 4-րդ նրբանցքի №14 հասցեի 12 հա մակերեսով անշարժ գույքից 3 հա մակերեսով հողամասը «ԱՐՄՓԱՌԻԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն, ինչից հետո 2019 թվականի ապրիլի 30-ին Ընկերության և «ԱՐՄՓԱՌԻԵՐ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքվել է նշված հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ №959 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր),

բ) Ընկերությունը 2019 թվականի հունիսի 10-ի №01/388-19 և հունիսի 21-ի №01/412-19 գրություններով դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով տալ համաձայնություն՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Արցախի փողոցի 4-րդ նրբանցք 14 հասցեի 12 հա մակերեսով անշարժ գույքից ևս 0.31հա մակերեսով հողատարածք (այսուհետ՝ Գույք) «ԱՐՄՓԱՌԻԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն՝ Պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով (այսուհետ՝ Գործարք),

գ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2019 թվականի հունիսի 25-ի №ՍԱ/2.3-63/1281-19 գրությամբ դիմել է

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ստանալու Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումը,

դ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի սույն թվականի հուլիսի 24-ի №02/16.7/34493-2019 գրությամբ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի դիրքորոշումները՝ Գործարքի վերաբերյալ առարկություններ չունենալու վերաբերյալ,

ե) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, համաձայն «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի վնասում ազգային անվտանգությունը և պետական շահերը, իսկ ձեռքբերողի՝ որպես էլեկտրաէներգետիկական համակարգում լիցենզավորված գործունեություն իրականացնող և անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության Գույքը «ԱՐՄՓԱՌԻԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն՝ Պայմանագրում փոփոխություններ կատարելու միջոցով:
2. Սահմանել, որ Գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝
   1) սույն որոշման 1-ին կետով նշված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան վերաբերող բոլոր փաստաթղթերի պատճենները.
   2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
7 օգոստոսի 2019թ.